ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքստուորլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Տեքստուորլդ ՍՊԸ	Տեքստուորլդ ՍՊԸ	Բաճկոն՝ անթև (ժիլետ) (MC) և սև Երկու տեսակի կտորի գունավորմամբ (մուլտիկամ գունաքողարկմամբ՝ 300 հատ և սև՝ 70 հատ), ՛՛ռիպստոպ՛՛ տեսակի երեսացույով՝ 230-250 գրամ/մ2 մակերեսային խտությամբ, 35 % բամբակ և 65 % պոլիէսթեր մանրաթելերից բաղադրությամբ (թույլատրելի է բամբակի պարունակությունը ավելացնել մինչև 50%) ջրարտազատող նյութով ներծծված (ցանկալի է նաև, հրակայուն նյութերով ներծծված) գործվածքներից: Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍ 9733-83, նվազագույնը 4 բալ : Աստառացուն շեղանկյուն կարվածքով (8սմ*8սմ զուգահեռ կարերով) մշակվում է ոչ պակաս 90 գրամ/մ2 մակերեսային խտությամբ արհեստական գործվածքից: Բաճկոնի ներդիրը մշակվում է մգդակարված 200 գրամ/մ2 մակերեսային խտությամբ սինտեպոնով: Բաճկոնը ներքևի եզրից մինչև օձիքի վերին եզրը կոճկվում է պաշտպանական կանաչ՝ համապատասխան գույնի,

			կենտրոնական շղթայով (գլխիկները ամուր, դիմացկուն A դասի , տրակտոր տեսակի № 6) , որի վրայից, ներքին եզրից մինչև օձիքի ներքին եզրը մշակված է երկկողմանի սեպաձև եզրերով 7-7,5 սմ լայնության կափույր, (ներսից սոսնձակտորով ամրացված), որը ներսամասից՝ գաղտնի կոճկվածքով, կոճկվում է իրարից հավասարաչափ հեռավորության վրա մշակված 5 հատ մետաղական կոճգամներով (գլխիկը՝ 15մմ տրամագծով, YIK կամ YKK): Բաճկոնի կափույրի վրա վերևից 15-ից 16 սմ դեպի ներքև ամրացվում է կամրջակի միջով անցնող 4,5-ից 4,7 սմ լայնությամբ և 11-ից 13 սմ երկարությամբ պատա՝ կոչման տարբերանշանի՝ ուսադիրի անցկացման համար: Պատայի ներքևի ծայրը սեպաձև, որը եզրաշերտին ամրանում է կպչուն ժապավենով: Կոչման տարբերանշանները ասեղնագործվում են ըստ Պատվիրատուի կողմից ներկայացված համապատասխան քանակներով կոչումների : Բաճկոնի օձիքը զարդակարված է շեղանկյուն կարերով, ներսից երեսպատված է խիտ ֆլիսե, համապատասխան գունավորմամբ կտորով, օձիքի բարձրությունը մեջտեղում 8-9 սմ է, եզրերում՝ 10-11 սմ լայնությամբ: Օձիքի վերին հատվածում առկա է շղթայի գլխիկը փակող 2,5սմ*4,0սմ պաշտպանիչ գրպանիկ: Ախլակների վրա պետք է տեղադրված լինի 8.5-9,0 սմ երկարությամբ և 5,1-5,3 սմ լայնությամբ երեսացուի գործվածքից կարված ասեղնագործ ուսադիրներ՝ հանովի օղագոտի: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վերևից՝ գրպանների լայնությանը համաչափ, մշակվում է 2.5սմ×12.5 սմ չափսերի և թիկունքին ամրացվող 12սմ*22սմ չափսի կպչուն ժապավեններ գրվածքները ամրացնելու, փակցնելու համար: Կրծքանշաններ և թիկունքի գրվածքներ՝ ՀՀ ԱԱԾ, ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ, ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐ, Ա ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ և արյան կարգի ասեղնագործմամբ կամ ջակկարդ գործվացքով գրվածքներ, ինքնակպչուններով (կոմպլեկտավորումը՝ ըստ Պատվիրատուի պահանջի): Օձիքի և բաճկոնի թիկնամասի միացման կարում, ներսի կողմից մշակված է ամուր կախիչ: Առաջամասում մշակված են վրադիր չորս գրպաններ՝

			կափույրներով, որոնցից երկուսը կրծքամասում, իսկ երկուսը՝ կողային մասերում: Կափույրների և գրպանների ներքին եզրերը թեք մշակված: Կրծքամասի ձևավոր գրպանների լայնությունը 15 սմ, երկարությունը 17 սմ կափույրի հետ միասին, կափույրի լայնությունը 6սմ, գրպանները տեղակայված են կենտրոնական ուղղահայաց շղթայից աջ և ձախ 6 սմ հեռավորության վրա: Ձախ գրպանին վրակարված է և.ս մեկ փականով գրպանիկ: Առաջամասի վերին զույգ գրպանների կափույրները և ստորին գրպանների կափույրները ամրանում են փակ գաղտնի կոճկվածքով, 15մմ տրամագծով մետաղական զույգ կոճգամներով: Առաջամասի կողային, ձևավոր վրադիր գրպանների լայնությունը 18,5 սմ, երկարությունը 21 սմ՝ կափույրի հետ միասին, կափույրի լայնությունը 7 սմ: Կողային գրպանները տեղադրված են բաճկոնի ստորին եզրից 2,5-3,0 սմ բարձրության վրա, գրպանները տեղակայված են կենտրոնական ուղղահայաց շղթայից աջ և ձախ 6 սմ հեռավորության վրա: Առաջամասի կողային վրադիր գրպանները՝ կողքից և վերևից մուտքերով են: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0,7սմ լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0,1 սմ կարի լայնությամբ: Բաճկոնի աստառին ձախ և աջ կրծքամասերում երեսացուի կտորով, մշակված են 15սմ*17սմ չափսի ծոցագրպաններ, որոնցից ձախը կոճկվում է կոճակ օղակով, իսկ աջը՝ շղթայով: Բաճկոնի ուսագոտիների եզրերը (բերանը) ծալված և վրակարված են, ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ 1,5-2,0 սմ: Գոտկատեղում մշակված են, 2,5 սմ լայնությամբ և 10սմ երկարությամբ ներկարված էլաստիկ ժապավեններ՝ իրանի չափսերի կարգավորման համար: Թիկունքամասի ստորին հատվածը իջվածքով է, դեպի ներքև մշակված է 3,5-4,5 սմ-ով ավելին, քան առաջամասի բարձրությունը, հաշվարկված ուսակարերից: Բաճկոնի ներսի կողմից՝ կողակարին փակցվում է արտադրանքի չափս-հասակի և համազգեստի լվացման և խնամքի վերաբերյալ գրվածքներով և սիմվոլներով պիտակ (կամ պիտակներ) : Պիտակի վրա նշվում է նաև պայմանագրի կոդը, արտադրող և/կամ

			մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Փաթեթավորումը՝ տեսականին պոլիէթիլենային ամուր պարկերով կամ եռաշերտ ստվարաթղթե արկղերով՝ յուրաքանչյուրում 10 հատ, տեսականու ամեն հատը պոլիէթիլենային թափանցիկ պարկիկներով: Կրծքանշանները առանձին- առանձին փաթեթավորված: Մեծ պարկերը կամ արկղերը պիտակավորված, պիտակի չափսը՝ 10սմ*15սմ , պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող և մատակարար կազմակերպության անվանումը,արտադրման կամ մատակարարման ամիսն ու տարեթիվը: Պոլիէթիլենային փակ պարկիկների մեջ պետք լինի պիտակ, որի վրա նշված լինի չափս-հասակային տվյալները, արտադրող և մատակարար կազմակեպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 3%: Ժիլետի արտաքին տեսքը՝ համաձայն Պատվիրատույի կողմից տրամադրվող նմուշի: Չափս հասակային (42/2 - 74/6), (չափսերի եվրոպական սանդղակով՝ XS - 5XL) և կոչումային (սերժանտականից - գեներալ-մայոր) տվյալները Կատարողին կտրամադրվեն պայմանագրի կնքումից և ՊՍ հաստատման ներկայացված 3 տարբեր չափս հասակային տվյալներով նմուշների հաստատումից հետո:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
3			